

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԱնՌնՔ որ ապրած են զբաղան կեանք մը, իզմիթի գրագէտ Մամուրեանը անբաժան կը նկատեն Արեւելեան Մամուլէն, ուր ինք մէկ քանի տասնեակ տարի ապրեցաւ, տալով հանրութեան առաջնորդող, զբաղան և իմաստասիրական գրուածքներու և երկարաշունչ յօդուածներու շարքը։ Բազմաբեղուն զրիչ մըն էր, անդիմադրելի, խտտեալի, վիճող, և անպարտութեան դրօշին ետեւէն վազող, հանրութեան մէջ՝ իր յիշատակը մաքուր տառերով կ'արձանագործէր, զբաղանութեան նախանձորդը և պատրիարքարանի խաբազանը կ'ըլլար։

Կը յիշէք անշուշտ, որ իր մահուանէն շատ տարիներ վերջը, հուսկ ուրեմն՝ կըրցանք ունենալ իր վիպական մէկ ընդարձակ գործը «Սեւ լեռն մարդը» արտատրւած «Արեւ. Մամուլէն»։ Գրական գործեր նկատուած են՝ նաև իր նամակները, որոնց մասին այս էջերուն մէջ ակնարկութիւններ ունիմ. առաջնութիւն կու տամ իր այս «Սեւ լեռն մարդը» վէպին։ Ասոր լիակատար ծանօթ ըլլալու համար, հարկ է իբր յառաջաբան գրուածէն մէկ քանի տողեր արտատպել։ Մ. Մամուրեանին՝ կը ներկայանայ Հայաստանէն հասած կրօնաւոր մը և կ'ըսէ անոր.

«Բարեկամ, ես Ռշտունեաց երկրին մէկ թափառաշրջիկ կրօնաւորն եմ, և ասոր համար՝ Հայր Բափասիկ կ'անուանեն զիս տեղացիք։ Անգամ մը՝ Փարոջաշտ (Մանազկերտ) գեղը գացի։ Կէս հայ, կէս քուրտ քնակի մը տնակը մտայ և քանի մ'օր անոր հիւր եղայ։ Իրիկուն մը՝ տան տէրս՝ որ թէև առոյգ կ'երեւէր՝ ալեգարդ մօրուս մ'ունէր, ելաւ կրակ վառելու, քանի մը փայտեր դիզեց փոսի մը մէջ՝ և մտորի մը նման խորշէ ևն չոր խոտերու հետ խառն թղթի թերթեր բերաւ որպէս զի խառոյկն արծարծէ։ «Ինչ կ'ընես, բարեմիտ

մարդ, միթէ Նարեկիդ թերթերը կ'այրես, հարցուցի անոր։ — Ձէ՛, մի՛ հարցնեմ, հայ թափառիկ, պատասխանեց հիւրընկալ հառաչելով, ձեռագիրներս են, որ վըրտալի բաներ և իմ տանս պատմութիւնը կը պարունակեն։ Լալու համար գրած եմ ասոնք, հիմակ որ աչքի լոյսս, արտասուքս ու կեանքս տարածամ հատան, կ'այրեմ ի՛նչ պիտի ընեմ։ — «Տուր ինծի այդ թղթերը, կարելի է որ օրին մէկը լոյս տեսնեն։ — Էհ, Սեւ Լեռն լոյս տեսնելիք չունի, այլ միշտ սուգ և արիւն։ Բայց եթէ կը պնդես, թղթերն որ ինքնին աչքիս խոտ են, յարդէն զատէ, ա՛ռ դու միայն կարդա, ապա ջնջէ»։ Ձեռագիր թերթերն առի, տան տիրոջ շնորհակալ եղայ ըրած պարգեւին համար և միտքս զրի՛ երբ այս կողմերը գամ, զանոնք հրատարակել տալ։ Ուստի եթէ արժան կը դատիս — շարունակեց հայ թափառիկ, մէջքէն կախուած ծրարն առջեւս դնելով, — հանդիսիդ կը նուիրեմ այս ձեռագիրներն, որ Ռշտունեաց և Կորդուաց նահանգը պատահած շատերուն ծանօթ դէպքերու նկարագիրներն են»։ Էւ Մամուրեան անձկանօք կ'առնէ այդ ծրարը, ուր կը գտնէ խառն ի խուռն շատ մը թերթեր։ Ետեւ կապէս աչքին կը զարնէ՝ կ'որ փաթեթուած ծրար մը, որուն վրայ գրուած է Սեւ լեռն մարդը խորագիրը։ Կը զրէ Մամուրեան։ «Այս պրակին կամ յիշագրին պատմութեան թելը գտայ, թէև տեղ տեղ տառերն արուեր, տեղ տեղ ոճն ու ձևը փոքր ինչ մուծ և շփոթ էին։ Դարձեալ որչափ որ կիսկատար տեղագրութիւններ, բարուց անորոշ և թերի նկարագիրներ որ կը պարունակէին, փոյթ չըրի, յատկապէս պատմութիւնը քաղեցի, մաս մաս բաժնեցի, ո՛հը մեր աշխարհիկ լեզուին վերածելով, և որոշեցի հետզհետէ հրատարակել հանդիսիս միջոցաւ առանց անոր ոգին այլայլելու»։ Չեմ գիտեր որքան ճշգրտիւն ունի այս յառաջաբանը, գուցէ անշուշտ բոլորովին վիպասանական դարձուածքով խօսք մըն է, ինչ որ նման գիւտեր ծանօթ են եւրոպական վիպասաններուն քով։

Ինչ որ ալ ըլլայ, գոյցէ նիւթը հայ թափառիկէն է, մենք կը հետաքրքրուինք գիտնալ, թէ այդ վէպին՝ ինքը Մամուրեան կրցեր է տալ զրաւան գեղեցիկ ձև մը:

Վէպ մը եթէ ձեւով տկար և աննշան ըլլայ, հոն գոնէ գաղափարական վարդապետութիւնը պահանջը մը կը դառնայ: Մամուրեան՝ Բարիզ Մուրատեան վարժարանին մէջ ուշակերտած ատեն, Պրահայի մեծ պայքար մը կը մղէր թագաւորական միապետական վարչութեան դէմ. նոր պայքարները ընդհանրապէս միշտ գնահատուած են նոր սերունդներէն: Մամուրեան նոյն առիթն, նոր սերունդին կը պատկանէր, և ինքն ալ միապետական իշխանութեան հակառակորդներէն կ'ըլլար. ի նշան այդ ճշմարտութեան, իսկոյն իր յիշեալ վէպին առաջին էջերուն մէջ՝ սա կարծիքը կը յայտնէ.

«Թագաւորները հօր և մօր պէս չեն զգար և չեն մտածեր, թագ ու գաւազան մարդու սիրտն ու գլուխը կը մոլորեն, ինչպէս մոլորեցին մեր Տրդատ թագաւորին, և անիրաւ վճիռներ արձակել կ'տան, երբ հաւատոյ և քաղաքականութեան դէմ իրր ոճիր մը գործուած տեսնեն»:

Հոս միամիտ է Մամուրեան, այս անգագութիւնը միայն թագաւորներուն մէջ սահմանափակուած չէ, փնտեցէք սահմանադրական կամ հասարակապետական երկրի մը դիւանագիտական պատմութիւնը. և ահա դիւրին է համոզուիլ, որ քաղաքական անձնաւորութեանց մէջ սիրտ չըկայ:

Վէպի մը յաջողութեան մէկ պայմանն ալ է: միջավայրի ծանօթ ըլլալ. գրել և նկարագրել Հայաստանի միջավայրերը առանց զանոնք տեսած ըլլալու, այդ կեղծ գրականութիւն է: Մ. Մամուրեան այդ ոճին հետեւած է. և իր ժամանակակից՝ հայրենասէր գրողներու ոճով՝ յափշտակուած կը նկարագրէ չի տեսած վայրերուն պտուղները, ծաղիկները, ջուրերը և օդը, ու պատկառանքով կը խոնարհի Մա-

սիսի վեհութեան առջին: Տեսէր ինչ կը գրէ.

«Տակաւին բլուրներն անդալար և անծաղիկ էին, ծիրանը, դեղձը, խնձորն ու դամիւնն դեռ ևս չէին գարգարեր պարտէզները, բայց դարձեալ սպիտակափայլ հեռաւոր լեռները, դարեանդներու ձեան հալուած գոյացած մանր մուրը ջրվէմներու ու առուների, դէս ու դէն երեցած ձիւնապատ փլատակներ ու մօտ գիւղօրէք՝ իրենց նսած վանութիւնն ունէին»:

Միջավայրի հարազատ ու բնորոշ յատկ նկարագրութիւն մը չէ այս: Նման գրութիւն մը կարելի է ընել փակուած ֆնալով «Արեւելեան Մամուլի» խմբագրատան մէջ, առանց տեսած ըլլալու իր նըկարագրած վայրը:

Սակայն Մամուրեան՝ թէ և իր նկարագրութիւնները ականատեսի մը պէս չի կրնար ընել, բայց հմուտ ըլլալով Հայաստանի պատմութեան և աշխարհագրութեան, այնպիսի ոճով կը գրէ, որ կարծես արդէն իսկ միջավայրը իրեն ծանօթ է: Ու այդ ոճը՝ իր պարտի իր գրական հմտութեան: Վէպին մէջ, կան մեծ դերեր կատարող անձնաւորութիւններ. կայ Զօրաքաջի անձնաւորութիւն մը, որ Բաքերդի բանդին մէջ Պարսիկներէն բանդուած է, իր կինը Նուարդ և որդին Դերենիկ առաջնորդութեամբ վարդապետական ծառայ ծերունի Առամին, ամէն ջանքով ու տանջանքով՝ կ'աշխատին Բաքերդ երթալու. անոնք ճանապարհին, վիպական խոսակցութիւններով կ'անցնեն: Առամ հայրենասէր մըն է, բայց տգիտ իր ազգին քաղաքական ընթացքէն: Մամուրեան՝ առնոր բերնով կը խօսի և կը քննադատէ մեր ազգը. և տեսէր ինչպէս.

«Հիներն իրենց խելաց հետ կորուսեր են Հայաստանը, վասն զի անհամար թըշնամիներուն մէջ են ընկեր. նորերը զայն ծեղ ձգելու չեն աշխատիր, վասն զի տգիտ են, անբան են ինձի պէս, վասն զի մեր քահանաներն անդադար կ'ըստովեն մեզ թէ մարդու ճշմարիտ հայրենիքն երկինքն է, վասն զի մեր ստրկամիտ մեծն-

ըը կը յորդորեն մեզ լզեւ մեր շղթաները և մեր սիրտն աղբով ու քսակն դեղին քարով լնուլ, վասն զի մեր ուսումնագէտները կ'խաբատեն մեզ աշխարհի քաղաքացի լինել և ամեն տեսակ իշխանութիւն պաշտել. ուստի երկիրը կը զոհնէք երկնի, ազատութիւնն ոսկրի, արգարութիւնն բլուռ նակալութեան, Պարսութիւնն ու անկումն ամսթ չեն, հրեշտակներն անգամ ընկան, բայց գէթ սատան դարձան և այս ալ կերպ մը շարժում է, կանգնում է, իսկ հայերն երբ միանգամ վար զլորին, յափսթեքս կ'խաղան, կ'սողան և գոնէ մտքով ու սրտով վեր ելնելով՝ նախ բարոյապէս և ապա նիւթապէս յաղթահարելու օրէնքը չեն սորվիր...»:

Մ. Մամուրեան կարծես՝ վէպին մէջ ալ առաջնորդող յօդուած կը գրէ: Միշտ ֆրանսաշունչ թափով կու գայ ասպարեզ և խարազանը կը շաչէ, և շատ անգամ քննադատելու համար, խօսքերը մտքէն հրաման չառած, բերնէն կը պոռթկան:

Մ. Մամուրեան զազափարի մարդն է, իր քարոզներուն մէջ, թէեւ քահանայութեան դէմ կ'երեւի, սակայն ոչ թէ կարգին, այլ անոնցմէ այն դասապարզին միայն՝ որ չի յարգեր իր աստիճանին բարձրութիւնը. ընդհանրապէս՝ առողջ զազափարներով կ'առաջնորդէ իր ընթերցողները: Տեսէք նոյն ինքն Մամուրեան՝ իր վէպին Ատոմին բերնով ինչ կը գրէ.

«Եթէ սիրտ և միտք փտին մոլութեան և ստրկութեան մէջ, բոյժ չկայ, վերելք չկայ, հրաշք չի գորեր, և այն ատեն յարութիւնն առնելու համար չէ թէ այս՝ այլ հանդերձեալ կենաց սպասելու է, և դարձեալ կասկածելի է իսկ որ միւս աշխարհը վերածննդի այն որ այս աշխարհիս մէջ ի սպառ մնաւ է: Ուստի մենք գործով ցոյց տանք մեր հաւատքը, քալենք որչափ որ մեր բոյժը կը տանի մեր նպատակին՝ այս փշայից ասպարէզին մէջէն, և անտարակոյս Ս. Լուսաւորիչ մեր թշնամիներուն պիտի շփովն, մեր ճգունքը պիտի պսակէ»:

Այս տողերն ակնյայտին ցոյց կու տան

որ Մամուրեան, թէև Պրանսայի մէջ մեծ ցած ազատամիտ մ'է, սակայն Հայաստանի մարդը, իր ազգութեան մէջ ամուր և առողջ պահելու համար, հարկաւոր կը նկատէ հայկական կրօնքը: Սակայն հաւատքը մեծած ըլլալու չէ, կ'ըսէ, այլ գործով ցոյց տալու է զայն:

Մ. Մամուրեան՝ որչափ որ կարելի է, պահած է իր գրութեան մէջ վուպլէթը Սրբի վիպական ոճը, նկարագրութեան մէջ անոր է հետեւած. դաշտերու, գետերու և լեռներու պատկերներէն վերջը, յանկարծ երբեմն խորհրդաւոր բանտերու դռները կը բանայ, երբեմն ընթերցողը կը հանէ վանքերու և քարայրներու առջև, և որչափ որ կարելի է, նոյն վայրերը հետաքրքրական ընելու կ'աշխատի:

Զօրան ազատելու համար, ուղեւորող կինը Նուարդ և որդին Դերենիկ ու ծառան Ատոմ ամէն վտանգ յանձն կ'առնեն: Անոնք ճամբորդութեան ատեն՝ կը տեսնեն որ լեռան մը ստորոտը քար մը կը շարժի և իրենց առջև կ'իջլէ քրճագեղաց մարդ՝ Գուրգէնին որդին Անանուն, որ կը ճանչնայ Զօրան: Ինքը քարայրի մէջ քաշուած կ'ապրի. հօրը համար մնաւ որ համար, որի, բայց ոչ Հայաստանի համար: Իւր քարայրը իր մարմնոյն գերեզմանը կ'ընդունի: Մ. Մամուրեան սա վիպական նրկարագրութիւնը կ'ընէ.

«Եւ Անանուն կորովի ձեռքովն Ատոմին թեր բռնեց ձիւն վար լիջեցուց. ապա եկաւ գիս գրկեց ճակտէս համբուրեց և գնաին դրաւ. նոյնպէս մօրս օգնելէն ետեւ որ վար իջնէ, ծոցէն սուլիչ մը հանեց և թեթև մը փչեց:

Իսկոյն պատանի մը այծի նման թեթեաշարժ, լեռնակէն վազելով, եկաւ Անանունին առջև՝ ձեռքը կուրծքին վրայ խաչածեւ դրած՝ ակնածութեամբ կեցաւ:

— Վրէժ, ըսաւ ճգնաւորը տղուն, առ սա ձիերին տար ախոռը քաշէ և անոնց առատ գութի տուր:

— Աշմարտին, ամէն բան տարօրինակ կ'երեւի ինձ այստեղ, միմայ Ատոմ, բնակ և բնակարան, անուն և անանուն, ասուն

և անասուն: Միթէ արտուր քարայրը չէ՛, ուր կը հրաւիրուինք, և եթէ անբանը գաւրի կ'ուտէ, բանաւորն ինչո՞վ կ'կերակրի արդեօք:

— Խոտով, ըսաւ Անանուն ժպտելով, այս է լեռնցի չարքաշ ճգնաւորի անուշդ: Բայց խոտ մեծարելու համար ձեզ չեմ հէտընկալեր այլ հոգի տալու: Ուտտի արդէն շատ երկար կեցանք բաց օդին՝ իմ ետեւն եկէք:

— Հանելուկ, ամէն մէկ բառը հանելուկ մ'է ինծի համար, ո՛ մարդ, ըսաւ Ատոմ, և դու հմայելով մեզ ծուղակդ պիտի նետես:

— Երբ ամէն բան իմանաս, ինքնին պիտի լուծես հանելուկը, պատասխանեց Անանուն և բնակարանը դիմեց: — Հեռաքրքրութիւնը և յոյսը մեզ պաշարելու սկսան: Իբրաւ ետեւէ զնաւորին բացուածքէն ներս մտանք: Ճգնաւորին ահագին քարը վերստին զլորեց և մուտքը գոցեցն ետեւ երկաթէ մոյթերով զայն ամբարացուց: Սաստիկ մուկ էր. փոքրիկ ծակ մը՝ ուակից Անանուն ձայն արձակեր և մեզ այնքան սարսափ ազդեւ էր, զբան թեթեւ լոյս կ'ընդունէր իբրաւ, բայց խոռոչին մէկ անկիւնը միայն կը լուսաւորէր: Մեր ասպնջականն պատուիրեց մեզ որ ձեռք ձեռքի բռնենք, և ինքն ալ Ատոմինը բռնելով, սկսաւ քալել: Կարծես թէ դար ի վեր կ'ելնենք նեղ ուղիէ մ'անցնելով՝ որու յատակը քար էր, ինչպէս նաեւ երկու կողմի խորթ ու բորոտ պատերը: Հինգ վայրկեանէ վերջ նուաղուն նշոյլ մը տեսանք և դռնէ մը մտնելով, քառակուսի վայր մը հասանք: Սուրբ և ահաւոր կու վայր մը որ մեզ երկիւղածութեամբ լի սարսուռ մ'ազդեց: Մատուռ մ'էր այս կամարակապ: Մէկ կողմը խորամ մը կ'երեւէր վիմափոր և վրան սրբատաշ սեւ մարմարէ խաչ մը՝ որ թէև պարզ՝ անզին էր իր հնութեան և մանաւանդ խորհրդաւոր վսեմութեանը համար: Ոչ աշտանակ, ոչ սմո՛, ոչ ոսկի զարդ կար սեղանին վրայ և ոչ պատկեր պատերուն վրայ, որ միակտուր էին բնապէս: Բնմին տեղ՝ ըս-

պիտակ բոլորչի սիւնակ մը կ'երեւէր վերի կողմը գրեցակալի ձեռով, և ասոր վրայ դրուած էր ձեռագիր Աւետարան մը. իսկ կամարէն կախուած էր բիւրեղեայ կանթեղ մ'որ կը վառէր և անոյշ լոյս մը կը սրբուէր: Այս մատրան զիբըը, սրտաշարժ պարզութիւնն ու ազատագին լոյսն՝ այնպիսի խորին տպաւորութիւն մ'ըրին մեր սրտին վրայ՝ որ նոյն պահուն ամէն ինչ, հայր, հայրենիք և աշխարհ մոռցանք և բոլորովին երկնային ջերմասնղովթեամբ վերացանք: Ճգնաւորն գնաց ծունը դրաւ խորանին առջև և ճակատը քարին վրայ քանի մը բոպէ դնելէն ետե՛ւ՝ ոտք ելաւ և զուտ ու յատուկ ձայնով աշուրնական ազօթքն արտասանեց: Ինքնայորդոր անոր օրինակին հետեւելով՝ ձայնակից եղանք անոր և մանաւանդ նուարդ ջերմ արտասուք թափեց: Երբ աղօթքը լիցանաւ, ճրգնաւորին մօտ գնաց և անոր ձեռքն համբուրել ուզելով՝ ըսաւ.

— Հայր սուրբ, նախ Աստուծոյ և ապա քեզ շնորհապարտ եմ որ մեղաւորս արժանի բրաւ այս թաշին որու դուրսակն լինիմ: Ամէն վիշտս ու տառապանքս թեթեցան և նոր արիւթեամբ զինեցայ բազդին պատրաստած հարուածներուն տոկաւու: Ուրիշ փափագ չունիմ այս աշխարհիս մէջ բայց միայն Ջօրայիս ոտքը մոռնիլ Դերենիկ օրհնելով և Ատոմին երկնային երանութիւն մաղթելով»:

Թօսակցութեամբ այս նկարագրութիւնը կը շարունակուի: Որոշ կը տեսնենք որ վիպասանը ամէն ճիգ կը թափէ որ հրապարտիչ ընէ թէ պատմուածքը և թէ նկարագրութիւնը, և նոյնպէս կ'ուզէ որ խորհրդաւոր ներկայացնէ վայրը որ պարզ աղօթարան մըն է:

Ճգնաւորն իր քարայրին մէջ լաւ ճաշ մը կու տայ իր հիւրերուն. Մ. Մամուրեան բնական գոյներով կը նկարագրէ ճգնաւորին ապրած նկուղը:

Ուստի Պարսկական պատերազմին՝ Արքայ Միրզայի և Բաքըէնիչի բանակներուն մէջ, հայ մարտիկներ կը գտնուէին, թէ որքան օգտակար էր ազատիլ Պարսիկնե-

րուն լուծէն և մտնել Ռուս դրոշին տակ, այդ քիչ շատ պարզօրէն ցոյց կու տայ Մ. Մամուրեան, և կ'իմացնէ ոչ ուսաւսէր մ'ըլլալը: Զգնաւորը երկարօրէն մանրամասն կը պատմէ այդ պատերազմին պատմութիւնը, և հիւրերը կը լսեն իրենց Զօրային պատերազմական քաջութեանց նկարագիրը:

Նոյն ճգնաւորը կ'ուզէ ազատել Զօրան և կ'ուզէ անոնց աջակցիլ այդ նուիրական գործին համար: Զգնաւորին պատմութիւնը պատմական դասագրքի մը զօրութիւնն ունի:

Հիւր և ճգնաւոր՝ ուրիշներու հետ կը դիմեն Բաղաբերդէ շրջակայները, և դրամի ուժով կեղծ պատրուակներով կ'ազատեն Զօրան: Նուաւրդ կ'ունենայ ուրիշ որդի մը որուն անունը կը դնեն Վարուժան: Վէպին մէջ կը յիշուի ուրիշ կարեւոր անձնաւորութիւն մը՝ Նուրէժ՝ որ Զօրայի ազատութեան համար աշխատող վրացուհի մըն է և Զօրայի բանտարկելութեան պահուն՝ անոր սիրուհին կ'ըլլայ և անկէ կ'ունենայ Այծեմիկ աղջիկը, որ վաճառան մէջ իբրև ընկեցիկ աղջիկ, վաճառանէ մը կը խնամուի: Նուրէժ՝ վարուժանը կ'առեւանգէ:

Վէպը կիսատ է մնացած, վիպասանին որդին վերջաբանին մէջ կարեւոր յայտարարութիւններ կ'ընէ. Նուրէժ՝ տեսնելով որ այլևս Զօրային հետ առաջուան մտերմական յարաբերութիւնը պիտի չունենայ, թէ սպաննէ թէ՛ Զօրան և թէ՛ Նուաւրդը: Վարուժան կը մեծնայ յեղափոխական դիւցազ մը կը դառնայ, Պարսկական սահմանագլխին վրայ ունէր այն իր պատմութիւնը, զոր Մամուրեան թուրք զբաղնեւութեան խիստ պայմաններուն տակ չի կրնալով հրատարակել, կը ջնջէ զայն: «Սեւ Լիւրն Մարդն» նոյն ինքն Վարուժանն է:

*
* *

Ընդհանուր վէպը պատմական է, և վիպական մանրամասնութիւններով ճոխա-

ցած: Կրօնական և քաղաքական դատաւորութեանց մէջ վիկտոր Հիւկոյի խարազանող շեշտը կը լսեցնէ. վիպասանական գիւտերը քիչ շատ կը յիշեցնեն Ալեքսանդր Տիւմայի «Մոնթէ Գրիստոն»-ը: Տեղագրական նկարագրութիւնները կը պնդագործէ վալթեր Սքոթի. երանգապնակի ներկերով, բայց բանաստեղծական ոգեւորում մը ընթերցողներուն չազդեր:

Նկատելով Մ. Մամուրեանի այս վէպը՝ պատմական տեսակէտով՝ ընթերցողը տեսնէ գոհ պիտի մնայ, վասն զի ատով տեսնէ եղած պիտի ըլլայ Ռուս-Պարսկական պատերազմի ժամանակ՝ հայ դիւցազներու քաջագործութեանց պատմութեան: Թէև այդ պատմութիւնը դասագրքի զօրութեամբ աւանդուած է, բայց քանի որ երբեմն վիպասանական նկարագրէ էջեր կը սպրդին անոր մէջ, բնականաբար զօրութեան տաղտուկը երբեմն կը մեղմանայ:

Ընթերցողը՝ սիրայօժար կը հետեւի իր կարողացածին՝ վիպական հանգոյցներուն լուծումը տեսնելու համար. մատչելներուն պատիժով կ'ուրախանայ. հնարագիւտ փախուստներէն վերջը, կ'ուզէ գիտնալ, թէ ինչ վախճան պիտի ունենան անոնք: Հետաքրքրութեամբ ունկնդիր կ'ըլլայ նկուշներու մէջ պատահական անձնաւորութեանց նոր յայտնութիւններուն. կը սիրէ լսել բարի վանականներու պատմութիւնը: Վէպին դիւցազներուն հետ երկարօրէն կ'ուզէ թափառաշրջիկ ման գալ: Սիրտը կը կապուի այն անձնաւորութեանց հետ, որոնք դիւցազնօրէն հայրենիքի փառքին համար կռուել և յետոյ վանական ճգնաւորի խաղաղ կեանքը ապրել են: Կը դըրուատես ծերունի վանականը, որ ընկեցիկ Այծեմիկին խնամակալ կ'ըլլայ, անոր վրայ կը գուրգուրայ, և այդ հայրական անձնանուէր բարեգութ աւետարանական առաքինութիւնը՝ ծուռ մեկնութեանց նիւթ կ'ըլլայ և ծերունի ճգնաւորը, կը համբերէ և կը շարունակէ իր առաքելի խնամակալութեան պաշտօնը, և այդ բարի տիպարը՝ քեզ կը յիշեցնէ Մագսիմ տիւ Գաւի այն ազնուասիրտ ժողովրդագետը, որ

ընկեցիկ տղոց կաթ կը խմցնէր ու զանոնք կը մեծցընէր մայրական սիրով։ Վիպասանութեան ամբողջ ընթացքին՝ կը հիանաս այն ամէն անձնաւորութեանց վրայ, որոնք աննկուն, մինչև վերջը Զօրայի ազատութեան համար կ'աշխատին։ Գիւտերը համոզիչ չեն, բայց կը նկատես որ վիպասանի մը բնմէն կը լսես պատմութիւնը. իրականութիւնէն այդ պահուն կը հեռանաս։ Առասպելները վէպին համեմեք են. ինչ որ կը գործածէր նաեւ Մ. Մամուրեան, վէպին մեծ դիւցազը որ բանտարկեալ Բաղարբերդին մէջ, քիչ չի տեսնուիր, սակայն միշտ անոր դրուատիքը լսելով, զայն կը սիրես և կ'ուզես որ օր մը առաջ ո՛ր և է միջոցով ան ազատի։ Եւ յանկարծ կը զարմանաս, թէ ինչպէս պատմական այնքան կարեւոր ու ուշադրութիւն գրաւող անձնաւորութիւն մը, դրամական ուժով կարելի կ'ըլլայ ազատել կայսերական հրամանով՝ Սիպերիայի արժանացած ըլլալով հանդերձ։ Ալզեցուցիչ է Նուրէմի ընթացքը և եղեմական ոխակալ գործերը, կը ծածաղիս Զօրայի յեղեղով հոգեբանութեան վրայ, կ'ազատի բանտէն ուր ամէն յոյս արդէն մեռած էր, և նոյն երջանիկ վայրկեանին որ ինքզինքը կը գտնէ իր Նուարդին և Գերենիկին բազումներուն մէջ, բնաւ Աստուած չի յիշուիր, ու երբ իր երկամեայ Սթեմնիկը կը կորսուի, դէպ ի երկինք կ'ուղղէ անէծքներ, և կը մոռնայ իր Աստուածը ու աստուածուրաց մը կը դառնայ։ Եւ կարծես այդ էջերուն մէջ, Մ. Մամուրեան ուզած էր ուրուագրել ընդհանուր մարդկութեան մէկ մեծ մասին՝ Աստուծոյ հետ վերաբերումի ապրաքախտ մէկ էջը։

Իր վէպը կիսաառար մնալով հանդերձ, Մ. Մամուրեան՝ ակն յայտնի կ'ընէ, թէ կը սիրէ պատմական վիպասանութիւնը. այն ոճը յարգած է, ինչ որ կը տեսնուի Մերենցի «Երկունքին» մէջ։ Բացարձակապէս առասպելական շրջաններուն մէջ չի մտնեցընէր իր ընթերցողները. ինքը կարգացած ըլլալով Ֆրանսական հռչակաւոր վիպասանները, (կտաւ Ֆէոյէ, Տիւ-

մա և Հիւկո, անոնց գիտական ոճին հետեւած է, դրական ուսումն ալ դրած է իր նիւթին մէջ, պատմականը կարեւորութիւն ունի իր այդ վէպին մէջ։

Ալշատած է իրեն անծանօթ շրջանակին պատմութիւնը ընել, և զայն կը զարդարէ իրեն անծանօթ միջավայրին գոյներով, հող զգացած է դժուարութիւն, եւ դիւրին գործ չէր, բնականաբար յաջողութիւնը անիրականալի։ Կեղծ վիպասանութիւն մըն է այդ, իրմէ առաջ Հ. Ալիշան այդ ոճը կը գործածէր «Յուշիկը Հայրենեաց» երկու հատորներուն մէջ, Գասական վէպերը իրենց կեղծ ոճովը կառելի է շատ յաջողութիւն գտնեն, եթէ վիպասանը խորապէս լաւ ուսումնասիրած է հին դարերու կամ իր նկարագրած դիւցազներուն շրջանին բարքերը և հնարասական գիտութիւնը։ Մամուրեան և Մենրենց վիպասանական նմարին մէջ հաւասարակշիռ կը մնան։

Նկատելով Մ. Մամուրեանը իր ընդհանուր առումովը, պահ մըն ալ զայն դիտենք Արփար Արփարեանին ակնոցով. «Տարիքն ու վիշտը ծինահեղձ մարեցին հրուս հրապարակագրին հոգեկան կրակը որ, ամէն կրակի պէս, առանց ընտրողականութեան հրդեհն կ'ուզէր դէմն ելածը» — Հանգուցեալը արգէն շատ մեծարեցեալ, ու պատկառազեցիկ անուններէն մէկն էր — Մամուրեան՝ մեր մատենագրութեան վրայ անջնջելի կնիք դրող մը զարգէտներէն չեղաւ։ Իրմէն հատոր մը մնայ պիտի։ Խնամուտ ձեռքեր եթէ գտեն վրոյր ու Դահնուր ծածկանուններու ներքեւ հրատարակուած քրոնիկները և ուրիշ քանի մը գործեր, պիտի կրնան կազմել գլոյց մը գործէ մենք հիմաև հաճոյքով պիտի կարդանք, և թէ մենէն ետքը եկողները — Եւ սակայն «Արեւելեան Մամուլ»ին խրմբագրիր առաջնակարգ գրագէտ մը հանդիսանալու յատկութիւններով օժտուած էր։ Իր թափանցող միտքը, սուր յիշողութիւնը, գեղեցկասէր ճաշակը գինքը մեծ գործեր ստեղծելու սահմանած կը թուէին։ Բայց մարդկային միտքն ալ հողին նման

է, թող ընտրութիւնը իր առանձնաշնորհումներովը զեղու զայն, ինամեալ մշակութեամբ է որ պիտի արգասաւորի: Մամուլեան աշխատելու ժամանակ չունեցաւ, վասն զի շատ ու շուտ արտադրումի կը հետապնդէր: Իր ձիրքերը իրեն թշնամիներ եղան, միտքը խորունկ արօրելու պէտքը զգացնել չտալով: Ան որ իրր ուժեղ հեղինակ տիրապետելու կոչուած էր, իր կարողութիւնները զնտանեց թարգմանչի կրատրական դերին մէջ: Ու իր ժամանակէն բաժին մըն ալ հանեց մանկավարժական հրատարակութեանց՝ որոնց համար մենաշնորհեալ տալանդի մը պէտքը զգալի չէ:...

«Արեւելեան Մամուլը» որ հրատարակման թուականին խոստանալից կը թուէր, չ'ազդեց նոր սերունդին զարգացումին վրայ: Ան միշտ հապնեպի ծրնունքը: Ո՛չ իմաստասիրութեան, ո՛չ գեղեցկագիտութեան, ո՛չ գրականութեան մէջ «Արեւելեան Մամուլը» առաջնորդ մը եղաւ մեզի: Հագրւ թէ դիպուածով ձեռքերնիս կ'առնէիր ո՛ր է մէկ թիւը, ա՜նոր մէջ օրուան կո՛ւնքերու վերաբերեալ թղթակցութեանց աչք մը նետելու համար: — Բայց աշխարհաբար լեզուն շատ բան կը պարտի Մամուլեանի: Այնպիսի ժամանակ մը որ նոր գրողները, նոյն իսկ Օտեանի և Ռուսինեանի պէս տաղանդներ, մեր նորածին գրական աշխարհաբարը հին հայերէնի հանգույցներուն մէջ կղզուած պահելով կը հաշմանդամէին, Մամուլեան իր գրիչը ազատ օդի մէջ արձակեց՝»:

Արողշովին համաժողովուրդ Պ. Ար. փրար Արփիարեանի, գոնէ ինծի համար անկարելի է: Կարդացեր եմ Վրոյրի և Շահնուրի քրոնիկները, որոնց հատորով ալ հրատարակուած են. հատընտիր հաւաքածոյ մը ընել այդ նիւթերէն, իրր զրական գործ դարձեալ արժէք պիտի չունենան անոնք: Ամենէն յաջող կարծուած քրոնիկներն ալ ամենախոշոր թերութիւններ ունին. անուրանալի է անոնց մէջ

ցայտուն երեակայութիւնը, բայց զքեզ չի զարմացներ, անհամ անհրապոյր հէքիաթներու ունկնդիր կ'ըլլաս, անըմանքներ՝ որոնք կրկին քուն բերելու զօրեղ դեղեր կրնան համարուիլ:

Պատմական ընդարձակ հմտութիւնը ակնյայտնի է, Ֆրանսական հեղինակներէն Ժ. Ժ. Ռուսսօն միշտ կը յիշուի: հելլէն, լատին օրէնսդիրները և գրագէտները յարգանք մ'ունին իր էջերուն մէջ:

Մեր ազգային թերութիւնները կը խառանէ. մեր ճակոխն կը զարնէ ապերախ տութիւննիս. կարգաւ կը յիշատակէ ազգին օգտակար եղողները ու կարծեցեալ օգտակարները, և տեսէք ի՜նչ տխուր եղբակացութեան կը յանգի: «Իր (հայը) կրօնական և ազգային շահերը պաշտպանելու համար ի բնէ անտի օգտաւորութիւն, երաշխաւորութիւն և ապահովութիւն տուող Ռամանեան Տէրութեան շնորհած պարգևը սիրով ընդունելէն ետեւ՝ անտարբերութեամբ ետ կ'ըսործէ. նոյն իրաւունքներն ի սպառ անհետ ընելու համար դարան լարող Տէրութեան մը որոգայթին մէջ մտադիր ընկնելու կ'միտի:... Երբ ժողովուրդ մը դարուս լուսաւորութեան և քաղաքակրթութեան դէմ այս ոճիւրները կամովին կ'գործէ, բարեկամ, այն ժողովուրդը կ'աւտեմ և կ'գոչեմ հառաչելով. «Վատ գու, ապագայ չունիս. արժանի ես այդ վիճակին, և քու տանդ բռնաւորներն իրաւունք ունին գլուխդ ջախջախելու: «Այդ կացցեն և զղոյս մի տեսցես»: Կը տեսնէք ի՜նչ լաւ ըմբռնում. և պէտք է մտածել որ Մ. Մամուլեան ազատամիտ փարիքի մէջ կըրթութիւն առած է, ֆրանսական ազատամիտ մամուլով սնած: Բայց չէ՞ որ ազատամութիւնը ոմանք կ'ըմբռնեն անսահման սանձարձակութեամբ: Մամուլեանի մտքի ազատութիւնը անկաշկանդ է, և գերբնական ուժին առջեւ տեսէք ի՜նչ կը գրէ. «Նոյն իսկ Աստուած չունի իմ միտքս սեղմելու կարողութիւն, թէ ոչ Աստուծոյ կը դարձնեմ՝ այն բանականութիւն, այն ազատութիւն որ ինձ շնորհած է»: Ի՜նչ ըրաւ այսպիսի ազատամիտ գրիչ մը. բան

տուեցաւ Թուրքիոյ անձուկ սահմանին մէջ, ահուգողի մէջ շարժեց իր գրիչը իր կարծածած « Օսմանեան Տէրութեան շնորհած պարգևը » սիրով ընդունեցաւ. բանտին մէջ ուզեց գրիչ շարժել. այս ազատութիւն էր իր ամբողջ հրապարակախօս գործունէութիւնը համապատասխան էր իր յեղափոխական մտքին... ընդհակառակն Գիւրի մնաց Մամուրեան. Ելբտըզի ճիւղը իրեն միտքը սեղմելու կարողութիւնը ունեցաւ. Բայց իր այս տղայամիտ բացատրութիւնները այնքան խոշոր չենք ուզեր տեսնել. Ունի շատ մեծ գործունէութիւն. Կ. Պոլսոյ ազգային ստեղծանադրութեան ամենէն մեծ ջիւղ՝ պաշտպանը եղած է, ու միշտ արծաթծեր է հանրային լուսաւորութեան յարգը: Աններողամիտ դատաւորը եղեր է Պոլսոյ պատրիարքական վարչական կեանքին. նպատակը գրեթէ միշտ բարի է եղած: Ազգային շահերուն ի նպաստ մտածելով, բիրտ լեզու մը գործածներ է կրօնամուլ և ազգամուլ վայրկեաններուն: Ընդհանրապէս առողջ սկզբունք ցոյց կու տայ. մանկական միամտութիւնը հոգիէն անբաժան է մինչև ցօծերութիւն:

Իր «Արեւելեան Մամուլը» իր ամենէն մեծ փառքն է. որուն դերը նսեմացած կը տեսնեմ Արփիարի գրչին տակ: Եւ այդ իրաւունք չէ՝ իր թերթը հոյակապ ծառայութիւն մը կ'ունենայ ընդերկար. հոն իմաստասիրական, բարեշրջական, գրական հարցերու բնիւր գործունէ եղած: Իր նամականիներն, մշուշ գաղափար մը կըրնան տալ թէ՛ որ աստիճան կտրելի է անուանել զինք գրագէտ, տարաբաղդարար՝ առողջ և ոչ իսկ ժամանակուան պատմական քրոնիկի նիւթեր կրնան ըլլալ. գրած է. «Իմ նամականիիս նիւթը պիտի լինի ազգն, և գրչիս շարժառիթը՝ ճշմարտութեան սէրն: Ազգային կարեոր անցքերն և խնդիրները պիտի շօշափեմ անցնիմ քանի որ այժմ Կ. Պոլիս կ'գտնուիմ»: Այս է եղած իր նպատակը. և իրօք ճշմարտութիւնը սիրած է. կեցծիբնէ գգուշացած. անվեհեր կոռուղ, ջատագով յառաջադիմական հարցերուն: Ա. Արփիարեան՝

digitised by

գրական պատառիկներ կը համարի գտնել Մամուրեանի նամականիներու մէջ, բայց կ'երևի ինքը այդ գրութիւնները կարդացած չէ այն առնի, երբ կը գրէր Մամուրեանի մահուան այդ կենսագրականը. Գրագէտը իր գրական համոզումները կը փոխէ իր մտաւորական զարգացումին հետ. երբ տասարդ հասակին՝ Նամականիները հիացուցած պիտի ըլլայ գլորփար. բայց հասուն հասակին մէջ, Արփիար դժուարահաճ էր, երիտասարդական օրերու պատւորութեամբ գրականութիւն կը հոտուրտար անոնց մէջ, Եւ ինչ վաղանցուկ հոտ Մամուրեան կրնայ ապրիլ իր ըրտարակալական և հրապարակախօս մտքով:

Մամուրեան իբր ժրջան միտք, և բեղմնաւոր գրիչ ու թարգմանիչ անջնջելի անուն մը ունի մեր մատենագրութեան մէջ. մեր ամենէն մեծ գրչի աշխատաւորներու շարքին վրայ, յատուկ փառքի տեղ մը կը գրուէ: Անկլիական նամականիներուն վերջաբանը կը յայտնէ իր իրօքը. «Իբրև վարձք, ուրիշ քան չպիտի խնդրեմ, եթէ ոչ ինչ իր խնդրեց՝ ընկերային և քաղաքական փորձորիկներէն անցնող մեծ բանաստեղծ մը. Հայաստանի մէջ շիրիմ մը»: Հայ հոգին մէջ Մամուրեան շիրիմ մը չունեցաւ, իր յիշատակը կ'արփաթեւէ Հայաստան և իր անունը յաւիտեանակաւ նօթէն կ'ապրի իբր գրչի մշակ:

Ահա ցոյց մը իր մաքէն իբր պատկեր իր գրականութեան.

«Լոնտոն էի՝ երբ մի անգամ՝ ընկերութեան մէջ՝ մարմնիկ և խտաղէմ անկլիացի մը ըսավ եկաւ և գրեթէ սպառնական ձայնով մ'իմե՛ ըսաւ.

— Օտարական պարոն, կ'իմանամ որ հայազգի էք. կը փափաքէի գիտնալ թէ մեր վեհափառ Թագուհիին մօտ ձեր ազգի կողմէ գտնուող դեսպանին անունն ինչ է և ո՞ր կը բնակի, վասն զի կարեոր բան մ'ունիմ անոր հաղորդելու:

Այս հարցմունքը՝ թէ և բնական՝ անակնկալ գտնելով՝ պահ մը շփոթած մնացի, և լաւ մը նայեցաւ խօսակից անկլիացիին երեսն որ հասկընամ թէ կատակ կ'ընէ

A.R.A.R.®

իմ շփոթութեանս վրայ ծիծաղելու դիտմամբ, թէ ոչ միամտօրէն կը խօսիւ Էրր տեսայ որ ինք՝ ցուրտ ու հանգարտ դէմքով՝ իմ պատասխանիս կ'սպասէ, ըսի.

— Պարոն, ներկայ դարուս հայն, իր քաղաքական կացութեան համեմատ, չորս հինգ տեսակ տէր է չորս հինգ տեսակ ղեսպան ունի ուրիշ Տէրութեանց մօտ, բայց իրօք՝ հայու մը ղեսպանը նոյն ինքն է. ուստի կրնաք հաղորդել ինձ ձեր խօսելիքը»:

Անկլիտացիին ծուռ ծուռ նայիլէն և զիս վերէն վար չափելէն ետև,

— Բնաւ չէի կարծեր, ըսաւ, որ այդ կերպարանքդ ունեցող անձ մը գերի լինի:

— Կ'մոռնաք, պարոն, ըսի, որ Անկլիա ոտք կ'որոտն ազատ է»:

Այս պատասխանիս վրայ՝ խօսակիցս ձեռքս բռնեց և այնպէս ուժգին թօթուեց որ մի քանի րոպէէն ետք իմս լինելն ըզգացի. ապա իր այցեւորման տուաւ ինձ և խնդրեց որ միւս օր իր բնակարան երթամ զինք գտնեմ.

Որոշեալ ժամուն՝ գացի իր բնակարանն: Պարոն Հարլէյ, այս էր նոր բարեկամիս անունն, ծրար մը բռնած ձեռքն եկաւ և ըսաւ.

— Բաւական ժամանակ կայ որ իմ մէկ բարեկամս՝ մեռնելու ժամանակ, այս թղթերու ծրարը յանձնեց ինձ, և պատուիրեց որ կարդալ տամ: Այլ և այլ լեզուագէտներու, հնագէտներու ցոյց տուի. ոմանք ըսին թէ մեհենական գրիբը են, այլք՝ հայերէն, մինչև անգամ Հիպոկրատէսի դեղագիրներն են, ըսողներ եղան: Մակայն ես այս կարծիքն ունիմ որ Հայոց հին քարոյմեկոյն գիւմնէն ելած մանր մուշր յիշատակագիրներ պիտի լինին. ուստի միտքս զրի ձեր ղեսպանին հաղորդել:

«Այժմ բացէք ծրարը նայեցէք. եթէ ձեր բանին կ'գան և օգուտ մ'ունի այդ թղթերն, կ'բաշխեմ ձեզի, այս պայմանաւ անշուշտ որ քաղելիք շահուղ կէսն ինծի բաժին հանէք»:

Բացի ծրարն և ինչ գտնեմ աղէկ. ձեռագիր նամակներ, որոց մէկ մասը հայերէն

և մաս մ'անկլիարէն գրուած, սակայն խառն ի խառն և կէս մը պատառած և կէս մը խանգարուած էին:

— Զարմանք են, ըսի գոռոզամիտ բարեկամիս, որ իբրև հին և տարօրինակ բան մը կը ներկայէք ինձ թղթեր, որ թէ և մեզի համար քիչ շատ կարեւորութիւն մ'ունին, սակայն իբրև շահագիտական գործ՝ ստակ մը չեն արժէր:

— Ուրեմն, շուտով կրակը նետեցէք, տատասխանեց Պ. Հարլէյ: Կ'ցալիմ որ քանի մը պահարան և քիչ շատ հոգ տարի այդ անոտի թղթերը պահելու համար:

— Կրակը նետածի և մոխիր դարձածի պէս սեպեցէք, ըսի, վասն զի պիտի հրատարակեմ այդ թղթերը»:

Ապա շնորհակալիցս յայտնեցի, և ծրարը գրպանս դնելով դուրս ելայ:

Ահա այս նամակներն աչքէ անցնելով՝ ջանացի կարգի դնել. Թուական չգտայ. բայց յիշուած դէպքերէն կարելի է որոշել թէ ո՞ր ժամանակի Հայոց կ'վերաբերին այս թղթերը: Նիշար խառն է, և մեծ մասամբ Հայոց վրայ: Ունի նաև վիպական կապ մը, որ թէ և տեղ տեղ կ'կտրի, բայց ի վերջէ կ'շարունակուի և վախճանի մը կ'յայտի»:

Լաւ կամ յոռի, գաղափար մը կարելի է կազմել այս պատահիկով: Մամուլեանի գրական ոճին, պաճառութեան կամ մութութեան մասին, իր աշխարհարարին և առասպելականին ու լրջականին վրայ:

Նամականիները առհասարակ հաստատուն ոճ մը չունին, երբեմն հրապարակախօսին կրակոտ ձայնը կը լսես, երբեմն կը սաւառնիս ամպերէն վեր՝ Ժիւլվէրնական երազանքներ, երբեմն կը գտնուիս պարահանդէսներու ներկայութեան, ու վիպասանական պատկերներէ կ'անցնիս, երկար ու երկար շունչ կ'առնես պատրիարքական խորհրդարանին մէջ, ու Մամուլեան յանուն Սահմանադրութեան կը ստիպէ որ խօսիս: Շատ գրած է և շատ խօսած, և գրագիտական ոճը անխնամ թուղած:

Հ. Ս. ՆՐԵՄԵԱՆ